ՁԵՐ ԴՊՐՈՑԸ ԿԱՐՈՂ Է ՕԳՆԵԼ ՁԵԶ՝ ՀԱՐԹԵԼՈՒ ԲՈԼՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ



Լոս Անջելեսի միավորված դպրոցական համայնքը հավատարիմ է՝ հոգալու իր յուրաքանչյուր աշակերտի կրթական կարիքները: Երեխաները տարբեր ձևերով են սովորում, և մեր աշակերտների մեծ մասը կարող են արդյունավետ կերպով ուսանել ավանդական միջավայրում: Սակայն, երբեմն երեխաները լրացուցիչ օգնության կարիք ունեն: Հաշմանդամ երեխաները կարող են իրավունակ լինել՝ հատուկ կրթական ծառայություններ ստանալու համար: Այս ծառայությունները նախատեսված են բավարարելու նրանց կրթական կարիքները և անվճար կտրամադրվեն նրանց ընտանիքներին: Որոշ հանգամանքներում հատուկ կրթական ծառայությունները կարող են սկսել ծննդից և շարունակվել մինչև քսաներկու տարեկանը:

Ինչպե՞ս կարող եմ որպես ծնող հավելյալ տեղեկություններ ստանալ իմ երեխայի և իմ իրավունքների մասին:

Համաձայն հաշմանդամ անձանց կրթության մասին օրենքի ((Individuals with Disabilities Education Act (IDEA)) հաշմանդամ երեխան կարող է հանրային կրթության իրավունք ունենալ, որը նախատեսված է իր առանձնահատուկ կարիքները բավարարելու համար: Ձեր երեխայի իրավունքների մասին հավելյալ տեղեկություններ ստանալու համար Ձեր տարածքի դպրոցից կամ գրասենյակից խնդրեք համայնքային հրապարակումները, «Հատուկ կրթություն ծառայությունների՝ ծնողների համար նախատեսված ուղեցույցը» (A P arent's Guide to Special Education Services): Այս գրքույկում մանրամասն տեղեկություններ են տրվում օրենքով սահմանված Ձեր պաշտպանության միջոցների մասին:

Որտե՞ղ պետք է զանգահարեմ՝ հավելյալ տեղեկություններ ստանալու համար:

Զանգահարեք Ձեր տարածքի պետական դպրոց կամ հետևյալ համայնքային հեռախոսահամարով, եթե լրացուցիչ աջակցության կարիք ունեք՝

213-241-6701

ԴՈՒՔ ՇՓՈԹՎԱ՞Ծ ԵՔ ՁԵՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՈՎ:



Հատուկ կրթական կարիքներին վերաբերող տեղեկություններ ծնողների համար

Հրատարկված է Լոս Անջելեսի միավորված դպրոցական համայնքի կողմից

Վերանայված է 2016թ. սեպտեմբերին

CC # 966-52-60275 Armenian

Ինչպե՞ս պետք է հասկանամ, որ երեխաս հատուկ կրթական ծառայությունների կարիք ունի:

Ձեր երեխան կարող է դժվարություններ ունենալ, որոնք խանգարում են նրա դպրոց գնալուն կամ սովորելու ունակությանը: Այս դժվարությունները կարող են լինել հետևյալ ընդհանուր ոլորտներից որևէ մեկում՝

❖Խոսքի և լեզվի զարգացում

Որոշ երեխաներ կարող են շատ դժվարանալ՝ հստակ խոսելու և/կամ իրենց ասվածը հասկանալու հարցում:

❖Տեսողության խնդիրներ

Որոշ երեխաներ կարող են լուրջ դժվարություն ունենալ առարկաները և/կամ տպված բառերը տեսնելու հարցում. նրանք նույնիսկ հնարավոր է, որ արդեն ակնոց են կրում:

❖Լսողության խնդիրներ

Որոշ երեխաներ կարող են լսողության դժվարություն կամ հնչյունները և ձայները զանազանելու դժվարություններ ունենալ, նույնիսկ եթե արդեն լսողական սարքեր են կրում:

❖Ֆիզիկական զարգացում

Որոշ երեխաներ կարող են քայլելը, շարժվելը կամ փոքր առարկաների հետ աշխատելիս դժվարություններ ունենալ:

❖Ուսմանն առնչվող դժվարություններ

ծրագրերը, որոնց կարիքը նա կարող է ունենալ: Եթե համայնքը որոշի, որ Ձեր երեխան իրավունակ չէ, Դուք իրավունք ունեք որոշումը բողոքարկել:

Որոշ երեխաներ կարող են կարդալու, գրելու կամ հանրահաշիվ կատարելու լուրջ դժվարություն ունենալ: Փոքր երեխաները կարող են դժվարություն ունենալ նախադպրոցական հմտությունների հարցում, ինչպիսիք են կաղապարները և գույները սովորելը:

❖Մտածողության/հիշողության հմտություններ

Որոշ երեխաներ կարող են այլ երեխաների համեմատ ավելի շատ դժվարություն ունենալ իրենց տեսածը կամ լսածը հիշելու հարցում: Արդյունքում դա կարող է ամենօրյա կյանքում կամ դպրոցի առաջադրանքները կատարելիս խնդիրները լուծելու մարտահրավեր լինել:

❖Ուշադրության/ընկալման հմտություններ

Որոշ երեխաներ կարող են տեղեկատվությունը մշակելու կամ ըմբռնելու դժվարություն ունենալ: Արդյունքում նրանց համար ուշադրություն դարձնելը կամ հրահանգերին հետևելը կարող է դժվար լինել:

❖Սոցիալական/հուզական զարգացում

Որոշ երեխաներ կարող են դժվարություններ ունենալ իրենց զգացմունքները և/կամ վարքը կառավարելու հարցում: Նրանք այլոց հետ շփումը կարող են շատ դժվար համարել: Նրանց համար կարող է դժվար լինել ընկերներ գտնելը կամ իրենց կյանքում տեղի ունեցած փոփոխության հետ համակերպվելը:

❖Կենսակերպի հմտություններ

Որոշ երեխաների համար դժվար կարող են լինել ամենօրյա գործողությունները, ինչպիսիք են հագնվելը, սնվելը կամ առողջապահական և խնամքի հիմնական կարիքները հոգալը:

❖Այլ առողջական խնդիրներ

Որոշ երեխաներ լուրջ կամ խրոնիկական առողջական խնդիրներ ունեն, որոնք կարող են խանգարել դպրոց հաճախելուն կամ ուսմանը:

Ի՞նչ պետք է անեմ, եթե կարծում եմ, որ երեխաս հատուկ կրթության կարիք ունի:

Աջակցության համար զանգահարեք Ձեր շրջանի պետական դպրոց: Եթե Ձեր երեխան հատուկ կրթության ծառայությունների գնահատման կարիք ունենա, ապա Ձեզնից գրավոր թույլտվություն կխնդրվի գնահատման համար:

Հատուկ կրթության ծառայությունների գնահատման մեջ ի՞նչ է ներառված:

Գնահատումը ներառում է Ձեր երեխային՝ վերաբերող տեղեկությունների հավաքում՝ որոշելու, թե արդյոք Ձեր երեխան հաշմանդամություն ունի: Գնահատումը կարող է ներառել անհատական ստուգում, դիտարկումներ, հարցազրույցներ և դպրոցի արձանագրությունների ստուգում, հաշվետվություններ կամ աշխատանքի նմուշներ:

Որքա՞ն կտևի գնահատումը:

Ուսումնական տարվա ընթացքում Համայնքը պետք է 15 օրվա ընթացքում գնահատման Ձեր խնդրանքին գրավոր պատասխան տա: Ձեզ կխնդրվի գնահատման ծրագիր ստորագրել:Երբ որ Համայնքն ստանա Ձեր կողմից ստորագրված գնահատման ծրագիրը, գնահատումը պետք է կատարվի, իսկ արդյունքները պետք է փոխանցվեն Ձեզ Անհատականացված կրթական ծրագրի (IEP) հանդիպման ժամանակ՝ 60 օրվա ընթացքում:

Ի՞նչ կարող եմ ակնկալել IEP հանդիպմանը:

Դուք կհրավիրվեք Անհատականացված կրթական ծրագրի (IEP) հանդիպմանը, որը կկազմակերպվի՝ փոխանցելու Ձեր երեխայի գնահատման արդյունքները և որոշելու, թե արդյոք Ձեր երեխան հատուկ կարիքներ ունի, որոնք նրան իրավունք կտան օգտվել հատուկ կրթության ծառայություններից: Եթե Ձեր երեխան իրավունակ լինի, IEP-ում կնկարագրվեն այն ծառայությունները և